

կուսայի մէջ ուստական դործարաններու արտադրութեանց համար» :2)

Ի դուր են Հայոց հասցէին նետուած քարերը: Հայ վաճառականները, ինքզինքնին պաշտպանելու համար, բնական է, որ պիտի դիմէին ուստահպատակութեան՝ ոչ միայն անդլիացոց առանձնաշնորհումներուն, այլև Պարսից անտանելի եւ կամայական կեղեքումներուն դէմ:

Ի դուր է նաև հայոց դէմ իր անուանարկութիւնը, երբ կը դրէ:

«Հայերը, որոնք մեր (անդլիացոց) ծրագիրը շատ չնկատեցին, այժմ մեր յաջողութեան նախանձելով, փտութեան եւ քսութեան բոլոր մեքենաները դործածեցին՝ մեր առևտուրը փճացնելու համար: Անոնք անվերապահօրէն յայտարարեցին, որ պատրաստ են սիրայօժար մեծ գումար մը ծախսելու, մեզ հոնկէ վտարելու համար, առանց տարակոյս ունենալու, որ մենք իսկ իրենց սպառնալիքը պիտի կատարենք, հրճուանքով համոզուած, որ Մ. Էլթընի Պարսկաստանի մէջ ստանձնած յանձնառութիւնը պիտի ըլլար մեր վաճառականութիւնը բոլորովին մարելու միջոց մը» :3)

Հակասութիւններով լեցուն է Հանուէյի այս վերլուծումը: Ինքն ալ կը խոստովանի, որ հայերը յարմարագոյն էին այս առևտուրին, ինչպէս նաև արդար ժառանգները հում մետաքսի վաճառականութեան, որուն երբեք ուրիշ ժողովուրդներ չկրցան հասնիլ:

Իսկ ո՞վ էր նախանձոտը: Բնականաբար, անկոչ հիւրը, իւրացնել ցանկացողը: Հայը չէր, որ Անգլիա կ'երթար տեղացւոյն օրապահիկը, ապրուստին միջոցը բերնէն խլելու, այլ անգլիացին էր, որ ամէն միջոցով, առանց ստորնադոյնին իսկ դիմելէ խրաչելու կուզար հայուն դարերով դարգացուցած առևտուրի հրապարակը իւրացնելու:

Անգլիական ձեռնարկներուն իրենց իսկ յիշատակարանները լեցուն են փտութեան եւ քսութեան պապանձեցուցիչ իրողութիւններով:

ըով, որոնց դէմ հայերը ինչ ալ ընէին, դեռ շատ հեռու էին անգլիացոց առևտրական անպարկեշտութեան հասնելէ:

Անգլիացիները, դուրի հայ վաճառականին խնայասիրութենէն եւ ծանր զրկանքներու վարժութենէն, երբեք չէին կրնար դիմանալ Արեւելքի մէջ այդ ատենները առևտուր ընելու պայմաններուն: Հայ վաճառականը ոչ միայն իր ինչքը այլ եւ կեանքը ենթարկած էր մահմետական ազահութեանց եւ վայրադուրութեանց: Այսպէս, ահազին կորուստներու ու վտանգներու ենթակայ չարքաշ, յարատեւ, հաւատարիմ հայ վաճառականը յանկարծ կ'ունենար հեռուէն եկած աչքը ծակ արցակից մը, որ երբ չէր կրնար ամէն միջոցով տիրանալ հայու արդար վաստակի միջոցներուն եւ պարտուած կը հեռանար, չէր ամչնար անուանարկելու զայն՝ նախանձոտ կոչելով: Երբ դողը զօրաւոր ըլլայ, տանտէրը դող կը բռնէ, կ'ըսէ առածը:

Հայոց հասցէին փտութեան եւ քսութեան տիրմը կը նետուի: Սակայն, ատոր լաւագոյն վարպետը ԺԶ. դարուն նոյնիսկ անգլիացոց ռահիբրայ Անդօնի ձէնքինսընն էր, որ չէր քաշուեր ափ մը հայեր եւ վրացիներ մահմետական այդ համայնակուլ ծովուն մէջ ապրտամբութեան դրդուլ թուրքերու եւ պարսիկներու դէմ, մինչ թաթարները Մոսկուան կ'այրէին, թուրքերը Վիեննայի դռները կը ծեծէին խոճապահար Եւրոպայի սրտին մէջ, իսկ պարսիկները անտիկ Օրմուզը կը դրաւէին փորթուկացիներէն: Ձէնքինսընն լաւ գիտէր, թէ ստոյգ կորուստի մը ճամբան ցոյց կուտար հայոց եւ վրաց, բայց այդ կ'ընէր, որովհետեւ այդ կերպով կը յուսար ստանալ հում մետաքսի հայոց միահեծան առևտուրը:

Հանուէյը, բնականաբար, չուզեր տեսնել այս փտութիւնն եւ ստութիւնը, այլ կը ջանայ արդարացնել փտութեան եւ ստութեան ուրիշ առաքելի մը՝ Էլթընի միջոցները, հայերուն հազցնելով մեղաւորի շապիկը:

Ձէնքինսընն կամ Էլթընն բացառութիւններ չէին իրենց այս տխուր դերին մէջ: Անգլիոյ եւ Ֆրանսայի Կ. Պոլսոյ դեսպանները դէպի

2) Անգ՝ էջ 300:
3) Անգ՝ էջ 303: